# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի ՆԻՍՏԻ N4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի ՆԻՍՏԻ N4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի նիստի N4 արձանագրային որոշման 5-րդ կետով հավանության արժանացած «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությանը հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածը ուժը կորցրած ճանաչել:
2. Հավանություն տալ`

1) ջրավազանային տարածքի կառավարման մոդելային պլանի բովանդակությանը` համաձայն հավելված N1-ի,

2) ջրավազանային տարածքի կառավարման մոդելային պլանի միջոցառումների ծրագրին` համաձայն հավելված N2-ի:

3. որոշման մեջ ավելացնել 3-րդ կետ հետյալ բովանդակությամբ «Ջրավազանային կառավարման պլանը մշակվում է վեց տարի ժամկետով, ինչից հետո այն ենթակա է թարմացման:»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջրավազանային կառավարման մոդելային պլանի

1. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ**

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ**

- Ջրավազանային կառավարման տարածքի համառոտ նկարագիրը
- Կառավարման պլանի նպատակը
- Ակնկալվող արդյունքը

2. **ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՌՇԻ ՏԱՐՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԳԵՏԱՅԻՆ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ**

- Ջրային հաշվեկշռի հաշվարկման մեթոդիկան
- Ջրավազանային կառավարման տարածքի ջրային հաշվեկշռի հիմնական տարրերը
- Համառոտ ամփոփումը, ըստ ջրավազանային կառավարման տարածքում առկա գետային ավազանների և ստորերկրյա ջրային ռեսուրսների
- Կանխատեսվող փոփոխությունը պլանավորման վեցամյա փուլում

3. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐԸ**

- Ջրային ռեսուրսների, այդ թվում մակերևութային և ստորերկրյա, համառոտ նկարագիրը
- Ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները
- Կանխատեսվող փոփոխությունը պլանավորման վեցամյա փուլում

4. **ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՋՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐ**

- Ջրավազանային կառավարման տարածքում ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների համառոտ ամփոփ ներկայացում
- Գործունեությունների սահմանափակումներ՝ հնարավոր վնասակար ազդեցություններից

5. **ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ԷԼՈԼՈԳԻԱԿԱՆ ԹՈՂՔԻ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

- Ջրավազանի էկոլոգիական թողքի և ստորերկրյա էկոլոգիական հոսքի որոշման մեթոդիկան, սկզբունքները և առանձնահատկությունները

- Էկոլոգիական թողքի և ստորերկրյա էկոլոգիական հոսքի հաշվարկում
- Էկոլոգիական թողքի և ստորերկրյա էկոլոգիական հոսքի հաշվարկված տվյալների ամփոփում, ըստ գետահատվածների և ստորերկրյա աղբյուրների՝ ներառյալ աշխարհագրական կոորդինատական կետերը

6. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՋՐԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՋՐԱՊԱՀԱՆՋԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ՝ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ**

- Ջրային ռեսուրսների առաջարկը՝ ըստ առանձին ջրային ռեսուրսների, ջրօգտագործման ոլորտների, ջրավազանային կառավարման տարածքում ներառված համայնքների, ինչպես նաև կարգավիճակի (որակի)
- Ջրապահանջարկի գնահատում՝ ըստ ջրօգտագործման ոլորտների և ջրավազանային կառավարման տարածքում ներառված համայնքների՝ ներառելով համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանման համակարգերի պահանջները
- Ջրառաջարկի և ջրապահանջարկի կանխատեսման սցենարը
- Ջրառաջարկի և ջրապահանջարկի գնահատման համառոտ ամփոփում

7. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Առանջնահերթ և ֆինանսավորում չպահանջող միջոցառումների հատկորոշում

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ջրավազանային կառավարման պլանի միջոցառումների ծրագրի

1. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- Միջոցառումների ծրագրի նպատակը, իրականացման ժամկետը
- Ջրավազանային կառավարման տարածքում բնապահպանական նպատակների սահմանում
- Ջրավազանում պլանավորման վեցամյա փուլի ավարտից հետո ակնկալվող արդյունքը
- Ամփոփում

## 2. ՋՐԱՎԱԶԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Ջրավազանային կառավարման տարածքի ընդհանուր նկարագրություն
- Ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, ինչպես նաև ջրային համակարգերի ընդհանուր բնութագրերը, տեղադիրքերը և սահմանների քարտեզագրում
- Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և որակական գնահատում, այդ թվում վերականգնվող և օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսներն, ըստ հոսքի բաղադրիչների
- Ստորերկրյա և մակերևութային ջրերի փոխադարձ հիդրավլիկ կապը
- Ջրաէկոհամակարգերի նկարագրություն
- Ամփոփում

## 3. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- Ջրավազանում առկա հատուկ պահպանվող տարածքների, ջրաբանական հուշարձանների նկարագրություն
- Հատուկ պահպանվող տարածքների տեղադիրքը և սահմանների քարտեզագրում
- Հատուկ պահպանվող տարածքներում շրջակա միջավայրի պահպանության՝ մասնավորապես ջրային ռեսուրսների պահպանության և կառավարման առանձնահատկությունները
- Ջրավազանային կառավարման պլանի համադրությունը հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների հետ
- Ամփոփում

## 4. ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

- Ջրավազանում ջրօգտագործման գործընթացի հետ կապված հնարավոր արտակարգ իրավիճակների և այլ վտանգավոր

գործառույթների բացահայտում
- Ջրավազաններում կանխարգելիչ միջոցառումների բացահայտում ուղղված արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշմանն ու դրանց վերացմանը
- Վտանգավոր օբյեկտների, վառելաքսուկային նյութերի արտահոսքի կանխարգելման միջոցառումների բացահայտում
- Ամփոփում

## 5. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ ԲՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԾԻՆ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

- Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, ինչպես նաև ջրաէկոհամակարգերի վրա բնական և մարդածին ազդեցության գնահատում և ճնշումների բացահայտում
- Հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում ջրի և ջրային էկոհամակարգերի վրա ազդեցության գնահատում
- Կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը ջրային ռեսուրսների ջրաէկոհամակարգերի վրա
- Ջրային ռեսուրսների կլիմայի փոփոխության հետ կապված կանխատեսումներ
- Առաջարկներ կլիմայի փոփոխության ազդեցության նվազման և հարմարվողականության համար

## 6. ՋՐԱՎԱԶԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ԷԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ (ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

- Ներածություն, տարանջատման չափանիշներ
- Խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմինների որոշում և դասակարգում
- Ջրավազանի ռիսկային ջրային մարմինների որոշում
- Ջրավազանի խիստ փոփոխված կամ արհեստական ջրային մարմինների որոշում
- Ջրավազանի արհեստական ջրային մարմիններ
- Ջրավազանի խիստ փոփոխված ջրային մարմիններ
- Ջրավազանի մակերևութային ջրային ռեսուրսների տարանջատումը առանձին ջրային մարմինների

## 7. ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՋՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

- Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները
- Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանում, հատկորոշում և քարտեզագրում
- Տարածքների պահպանման և վնասակար ազդեցության կանխմանն ուղղված միջոցառումների բացահայտում
- Ամփոփում

## 8. ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ՀԻԴՐՈՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

- Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քիմիական և հիդրոմորֆոլոգիական կարգավիճակի գնահատման, դասակարգման սկզբունքները
- Մակերևութային ջրային ռեսուրսների քիմիական, հիդրոմորֆոլոգիան կարգավիճակի գնահատում և դասակարգում
- Ստորերկրյա ջրային ռեսուրսների քիմիական և հիդրոմորֆոլոգիական կարգավիճակի գնահատում և դասակարգում
- Կարգավիճակի և դասակարգման ամփոփում՝ ըստ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների առանձնահատկությունների և ջրավազանային կառավարման տարածքում ընդգրկված համայնքների

## 10.ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ, ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՍՑԵՆԱՐԸ

- Ջրօգտագործման ներկա վիճակի վերլուծություն
- Ջրառաջարկի ձևավորման ռազմավարություն,
- Ջրառաջարկի կանխատեսում՝ ըստ ջրօգտագործման ոլորտների, առանձին ջրային ռեսուրսների և ջրավազանային կառավարման տարածքում ներառված համայնքների, ինչպես նաև կարգավիճակի (որակի)
- Ջրապահանջարկի գնահատում՝ ըստ ջրօգտագործման ոլորտների, առանձին ջրային ռեսուրսների և ջրավազանային կառավարման տարածքում ներառված համայնքների,
- Ջրապահանջարկի գնահատման սկզբունքները
- Ջրառաջարկի և ջրապահանջարկի բազային (ելակետային) կանխատեսում՝ հիմք ընդունելով ջրավազանում շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական և տնտեսական բաղադրիչները
- Ջրային ռեսուրսների բարելավման սցենարը՝ ըստ ոլորտների

11. **ՋՐԱՎԱԶԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**

- Բնապահպանական նպատակներին հասելուն ուղղված միջոցառումների բացահայտում
- Բացահայտված միջոցառումների նախնական ֆինանսական գնահատական՝ ըստ տարիների և առաջնահերթությունների
- Նախնական ֆինանսական գնահատականի հիմնավորում
- Միջոցառումների իրականացման ուղիները և ակնկալվող արդյունքը
- Ամփոփում

12. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵՖԻՑԻՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ**

- Ֆինանսական դեֆիցիտի բացահայտումը
- Կապիտալ և այլ ծախսեր
- Դեֆիցիտի ծածկում և բաշխում
- Կառավարման և բնապահպանության ոլորտներում ֆինանսական մուտքերը և դեֆիցիտը
- Հնարավորությունների եզրագիծ
- Ֆինանսավորումը ավելացնելու պոտենցիալ

13. **ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԿԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ**

- Ջրավազանային կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի մշակման գործընթացը, շահագրգիռ մարմինների և հանրության մասնակցությունը
- Ջրավազանային կառավարման պլանի իրականացման մեխնիզմները հասարակության և շահագրգիռ գերատեսչությունների ներգրավումը այդ գործընթացում
- Միջոցառումների ծրագրի իրականացում և համադրությունը առկա ռազմավարական փաստաթղթերի հետ
- Ջրավազանային կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի իրականացման խնդիրները և լուծման ուղիները
- Հասարակական քննարկումների և դաշտային հետազոտությունների արդյունքների վերլուծություն
- Ռազմավարական էկոլոգիական գնահատում
- Ջրավազանային կառավարման պլանի և միջոցառումների ծրագրի կատարման վերահսկման մեխանիզմները

- Եզրակացություն, առաջարկություններ և ամփոփում